
ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Ա. Ա.

Հայոց լեզվի բառապաշարն ընդգրկում է լեզվի զարգացման բոլոր փուլերը, լեզվական միավորները, դրանց կրած փոփոխությունները: Այն անընդհատ հարստանում է նոր բառերով, ինչպես նաև դարձվածային միավորներով (ԴՄ): ԴՄ-ները լեզվում առկա փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող կայուն կապակցություններն են, որոնք անբաժանելի, իմաստով ամբողջական բառակապակցություններ կամ նախադասություններ են (այդ թվում՝ վերաիմաստավորված հարադիր բայեր, թևավոր խոսքեր, երդման, հանդիմանական, առածասացվածքային, հեղինակային արտահայտություններ, անեծքներ, օրհնանքներ, մաղթանքներ, շրջասույթներ): Ի տարբերություն ազատ կապակցությունների՝ ԴՄ-ները հաղորդակցման ընթացքում չեն կազմվում, այլ վերարտադրվում են իբրև խոսքային պատրաստի միավորներ:

Խոսքը դիպուկ, արտահայտիչ ու պատկերավոր դարձնելու նպատակով պետք է ճիշտ տեղում ճիշտ ԴՄ գործածել: ԴՄ-ի ոչ ճիշտ ընտրությունը հանգեցնում է խոսքի խրթինության, անհստակության, ոճական ու տրամաբանական սխալների:

ԴՄ-ների համապատասխան ընտրությունը և կիրառությունը պայմանավորված են ոչ միայն գործառական ոլորտով, խոսքաշարով, այլև այն գործածողի անձնական, անհատական հատկանիշներով (խառնվածք, կրթություն, մասնագիտություն, դաստիարակություն, զարգացածության աստիճան, աշխարհընկալում, հոգեվիճակ և այլն), իսկ ստեղծագործողի համար՝ նրա ստեղծագործական հմտություններով, «ոճական հոտառությամբ», լեզվական հնարավորությունների յուրովի գործածությամբ, բառաստեղծական ունակություններով:

Ոճական տեսանկյունից ԴՄ-ները կարող են ընտրվել ըստ լեզվի գործառական ոլորտի, հուզարտահայտչական երանգավորման, խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցների, հոմանշային հարաբերության: Դարձվածային օտարաբանություններն ու փոխառությունները դիտարկվում են լեզվի գործառական ոլորտում:

Ըստ գործառական ոլորտի՝ ԴՄ-ները երկու խմբի են բաժանվում: Առաջինի մեջ մտնում են գործառական ոլորտի սահմանափակում չունեցող,

«գեղագիտական պոտենցիայից զուրկ»¹ ԴՄ-ները, որոնք կոչվում են համագործածական կամ չեզոք: Սրանք հավասարապես կիրառվում են գործառական տարբեր ոճերում և՛ գրավոր, և՛ բանավոր տարբերակներով: Համագործածական կամ չեզոք շերտի մեջ մտնում են առօրյա հաղորդակցության համար կարևոր նշանակություն ունեցող ԴՄ-ները, որոնք լեզվի հիմնական բառաֆոնդի և բառապաշարի գործուն մասն են կազմում: Դրանցից են, օրինակ՝ **աչքի ընկնել** – նկատվել, երևալ, ուշադրություն գրավել. **ձեռք բերել** – նվաճել, տիրել, տիրանալ, գտնել և այլն:

Երկրորդ խմբի մեջ մտնում են սահմանափակ գործածություն ունեցող ԴՄ-ները, որոնք ամենօրյա կիրառություն չունեն, գործածվում են գործառական այս կամ այն ոճում: Սրանց ոճական դերը բավական մեծ է լեզվում: Դրանք խոսքն ավելի պատկերավոր են դարձնում, կենդանի հնչողություն, կոլորիտ ստեղծում: Այս շերտի մեջ, բացի օտարաբանություններից ու փոխառություններից, մտնում են հնաբանությունները, նորաբանությունները, բարբառաբանությունները, ծածկախոսությունները, հասարակաբանությունները, գոեհկաբանությունները, ժարգոնային ԴՄ-ները, որոնք բառապաշարի ոչ գործուն շերտն են կազմում: Օրինակ՝ **այրընտիր եւ ձիւրնտիր առնել** (հնաբ.) – ընտրութեամբ այրուծի՝ հեծելազոր հաւաքել. **հոտած ջրում ապրել** (նորաբ.) – հարմարվել, յուրա գնալ. **աչքը արյուն լալ** (բարբառ.) – ողբալ. **պատը ծակ է** (ծածկախոս.) – զգուշացման ձև է՝ զգուշացի՛ր, մեզ լսող կա. **շուխուր գցել** (անել) (ժարգոն.) – աղմկել. **շան տեղ դնել** (չդնել) (հասարակ.) – արհամարհել. **թքածը լիզել** (գոեհկաբ.) – ասածից հրաժարվել և այլն:

Օտարաբանություն են այլ լեզուներից բառապաշար մուտք գործած ԴՄ-ները, որոնց համարժեքը լեզուն չունի: Դրանք առավելապես դրսևորվում են առօրյա խոսքում: Թեև դարձվածային օտարաբանությունների գործածությունը խրախուսելի չէ, բայց ոճական տեսանկյունից բացատրվում է խոսողի ընտրությամբ և դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով:

Դարձվածային օտարաբանություններն օգտագործվում են նաև հրապարակախոսական, գեղարվեստական ոճերում: Ինչպես Էդ. Ջրբաշյանն է նշում, դրանք «Գրողը գեղարվեստական – ոճական հատուկ նպատակներով գործածում է գեղարվեստական խոսքում»³:

Դարձվածային օտարաբանությունները՝

¹ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 89:

² Չորրորդ ինքնիշխանություն, 28.VIII.2012:

³ Ջրբաշյան Էդ., Գրականագիտության ներածություն, Ե., 1996, էջ 146:

- ունեն հայերեն համարժեքը,
- արտահայտում են տարբեր ժողովուրդների լեզվամտածողությանը, կենցաղին, սովորություններին վերաբերող հասկացություններ,
- նպաստում են կերպարների տիպականացմանը,
- խոսքին կարող են երգիծական երանգ հաղորդել (դարձվածային օտարաբանությունների աղավաղված գործածությամբ սգետ մարդը փորձում է գրագետ ձևանալ):

Դարձվածային օտարաբանություններն առօրյա խոսքում շատ են օգտագործում մայրենիին լավ չտիրապետող կամ դրանց համարժեքներին քաջատեղյակ մարդիկ, որոնք գործածում են օտար տարբերակները՝ ելնելով խոսքային իրադրությունից: Դա կարող է նաև լեզվական անփութության հետևանք լինել: Օրինակ՝ **զակագ անել** (օտար.) – պատվեր տալ (գրական) – պատվիրել. **ստավկա անել** (օտար.) – մի բանի վրա խաղաղումար դնել (գրական) – հույսը, հաշիվները մի բանի հետ կապել. **պռավալ տալ** (օտար.) – գլխին քար գցել // գործերը ձախ գնալ (գրական) – փչացնել, ձախողել. **մեյդան (դուրս) գալ** (մտնել, բաց անել, դուրս բերել) – հրապարակ գալ (գրական) – հայտնվել, հրապարակել, ասպարեզ իջնել. **նա շիշ, նա քյաբաբ** (օտար.) (այս օրինակը թուրք. **Նե շիշ յանսըն, նե քեբաբ** ԴՄ-ի աղավաղված տարբերակն է) /**հի խորովածն այրվի, ոչ շամփուրը** (գրական) – կողմերից ոչ մեկը չտուժի:

Դարձվածային փոխառությունները այլ լեզուներից լեզվի բառապաշար մուտք գործած միավորներն են: Ի տարբերություն դարձվածային օտարաբանությունների՝ փոխառությունները լեզվի բառապաշարում իրենց համարժեքը չունեն: Դրանց մուտքը լեզու խրախուսելի է, քանի որ լեզուն ԴՄ-ներով հարստացնելու կարևոր աղբյուր է: Դարձվածային փոխառությունները կատարվում են արտալեզվական գործոնների ազդեցությամբ. դրանք տարբեր ազգերի և նրանց լեզուների շփման հետևանք են: Բնորոշ են բոլոր լեզուներին և կատարվում են տարբեր ժամանակներում: Ոճաբանության համար կարևորվում են միայն նոր փոխառությունները⁴:

Փոխառություն են նաև դարձվածային պատճենումները: Այս դեպքում կատարվում է օտար ԴՄ-ների բաղադրիչների հայերեն թարգմանություն (Ե. Գևորգյանը կարծում է, որ թարգմանությունն ամենից առաջ կատարվում է նույն լեզվի ներսում, օրինակ՝ **սաստանի ձի նստել** թարգմանվում է՝ **հակառակվել, ձեռք-ոտք տեսնել, զարդարել, զուգել...**⁵):

⁴ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 181:

⁵ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969, էջ 39:

Թարգմանությունը ոճաբանության համար կարևոր խնդիր է: Առավել դժվար է ԴՄ-ների թարգմանությունը (պատճենումը), քանի որ այս միավորները վերախմաստավորված և հուզարտահայտչական երանգավորում ունեցող պատրաստի կառույցներ են: Թարգմանությունների մեջ բաղադրիչները կարող են համընկնել լրիվ կամ մասնակի: Օրինակ՝. *добро пожаловать, You're welcome!*, (թուրք.) *հոշ գելդինիզ*, (արևմտհ.) բարի եկաք - խնդրե՛մ (ի պա-տասխան «շնորհակալություն»-ի). *за кулисами*, (ֆրանս.) *dans la coulisse*, կուլիսների հետևում - 1. պաշտոնական իրադրությունից դուրս, ոչ բացահայտ, 2. ծածկված, ծածուկ. *напрягать уши, strain one's ears, be all ears*, ականջը լարել // ականջ անել (դնել) // ականջը կախ անել // ականջները չորս բաց անել // ականջները սրել - լսել. *ни рыба, ни мясо*, (գերմ.) *Kein Fisch, Kein Fleisch*, ո՛չ ձուկ է, ո՛չ միս - անորոշ՝ հստակ դեմք չունեցող մարդ. *плевать (плюнуть, наплевать) в лицо (в глаза)*, երեսին թքել // աչքի մեջ թքել // վրան թքել // մարդ չհամարել // մարդու տեղ չդնել // բանի տեղ չդնել // շան տեղ չդնել - արհամարհել, հաշվի չնստել հետք. *по ту сторону баррикад*, բարիկադի այն (մյուս, հակառակ) կողմում - պայքարող ուժերի (հեղափոխականների և այլն) հակառակ դիրքերում. *смотреть (глядеть, взглянуть и այլն) иными глазами*, այլ աչքերով նայել // խեթ նայել // ծուռ աչքով նայել - այլ կերպ վերաբերվել. *пятьдесят на пятьдесят, fifty-fifty*, հիսուն (առ) հիսուն - հավասար չափերով, պայմաններով:

ԴՄ-ների պաշարում միջազգային գործածության շերտն են կազմում գրական ճանապարհով լեզվին անցածները: Դրանց ծագումը կարող է լինել⁷.

աստվածաշնչյան (արգելված պտուղ - անհասանելի, բաղձալի որևէ բան. բարելոնյան աշտարակաշինություն - խառնակություն, խառնաշփոթ. քավության նոխազ - մեղքերը քավելու համար անմեղ զոհ. Նոյի ագռավ -

⁶ Օրինակները տրված են ըստ հետևյալ բառարանների՝ **Кунин А.** *Англо-русский фразеологический словарь*, М., 1967, Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան (խմբ.՝ Մելքոնյան Ռ. և Պողոսյան Պ., Ե., 1975), **Войнова Л., Жуков В., Молотков А., Федоров А.** *Фразеологический словарь русского языка*, М., 1986, Անգլերեն-հայերեն բառարան (խմբ.՝ Ասմանգուլյան Հ. և Հովհաննիսյան Ս., Ե., 1991), **Саркисян А.** *Русско-армянский словарь библейских крылатых слов*, Тула, 2001, **Евгеньева А.** *Словарь синонимов русского языка*, М., 2003, **Ղազարյան Հ., Մարմնի մասերի անվանումներով հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքների բառարան** (Ե., 2010), **Дубровина К.** *Энциклопедический словарь библейских фразеологизмов*, М., 2010, **Բեղիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան** (Ե., 2011):

⁷ Օրինակներն ըստ Գ. Գալստյանի «Դիցաբանական անունների և դարձվածքների համառոտ բացատրական բառարանի» (1966), Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի» (1975), Պ. Բեղիրյանի «Հայերենի թևավոր խոսքեր» բառարանի (2007) և «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանի» (2011):

ուշացող, գնացած տեղից չվերադարձող. ավագի վրա տուն չինել - անհիմն գործ բռնել). **գրական** (աքիլլես-յան գարշապար - թույլ, խոցելի կողմ. ավգյան ախտոներ - բարձի-թողի վիճակ. պլատոնական սեր - մաքուր, մարմնական ձգտումներից հեռու, իդեալական սեր. տրոյական ձի - գաղտնի, քողարկ-ված միջոց. դամոկլյան սուր - վտանգավոր վիճակ). **պատմական իրադարձություններին կամ նշանավոր մարդկանց վերաբերող** (Ամերիկա հայտնագործել - վաղուց հայտնի բանը որպես նորություն ներկայացնել. վառողը չոր պահել - հեռատես լինել, պատրաստ լինել պաշտպանվելու. կարմիր թելի պես - ցայտուն երևացող, հիմնական գաղափար. Ռուբիկոնն անցնել - կարևոր, վճռական, շրջադարձային քայլ կատարել. դեղին մամուլ - հրատարակչություն, որը սուտ ու կեղծ լուրեր է տարածում). **օտար հեղինակներին և նրանց ստեղծագործություններին վերաբերող** (Ռոմեո և Ջուլիետ (Շեքսպիր)-ասվում է սիրահար զույգի համար. կոտրած տաշտակ (Պուշկին) - նախկին թշվառ վիճակ, անելանելի դրություն. արջի ծառայություն մատուցել (Կոիլով) - իբր թե օգնելով՝ իրականում վնաս հասցնել). **գիտության և արվեստի հետ կապված** (առաջին ջութակ - հիմնական դեմք, ազդեցիկ մարդ. տորիչելյան դատարկություն - անօդ տարածություն. ընդհանուր հայտարարի բերել - տարբերությունները վերացնել. պատրաստի դեղատոմս - ինչ-որ բան կանխելու կամ վերացնելու միջոց. կուլիսների հետևում - 1. պաշտոնական իրադարձությունից դուրս, ոչ բացահայտ, 2. ծածկված, ծածուկ, թաքուն):

Պ. Բեդիրյանը ԴՄ-ներից տարբերակում է թևավոր խոսքերը (ԹԽ)՝ առանձնացնելով հետևյալ հատկանիշները.

1. ԴՄ-ների ծագումն ավելի քան 90 տոկոսով անհայտ է, իսկ ԹԽ-ները ծագումով հայտնի են. վերջինները գալիս են այս կամ այն գրական, պատմական և այլ աղբյուրներից:

2. Դրանք տարբերվում են իրենց կառուցվածքով. ԴՄ-ների ճնշող մեծամասնությունը բառակապակցություններ են, իսկ ԹԽ-ները՝ նախադասություններ:

3. ԴՄ-ները հիմնականում հասկացություններ են արտահայտում, իսկ ԹԽ-ները՝ մեծ մասամբ դատողություններ:

4. ԹԽ-ները, որպես կանոն, բնագրի իմաստի, մտքի կնիքն են կրում, նրա իմաստային ու ոճական երանգն են պահում⁸:

5. Կարծում ենք՝ ԹԽ-ներից հատկապես լայն տարածում ունեցողները ժամանակի ընթացքում վերածվել են ԴՄ-ների: Այսինքն՝ գործառական

⁸ Բեդիրյան Պ., Հայերեն թևավոր խոսքեր (բառարան), Ե., 2007, էջ 5:

տեսակետից դրանք ԴՄ-ներ են և ունեն ԹԽ-ներին բնորոշ վերոնշյալ առանձնահատկությունները: Նկատելի է, որ Պ. Բեդիրյանի «Հայերենի թնավոր խոսքեր» բառարանում նշված շատ միավորներ առկա են նաև նրա «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում», օրինակ՝ աղքատ Ղազարոս. ական ընդ ական, ատամն ընդ ատաման. ահեղ դատաստան. ալֆա և օմեգա. ձայն բարբառոյ յանապատի. կոկորդիլոսի արցունք(ներ) թափել. մի ականջից մտնել, մյուսից դուրս գալ և այլն:

Կան մի խումբ ԴՄ-ներ, որոնք գործածվում են նաև առանց թարգմանության, ինչպես՝ *Alma mater* (սնուցիչ մայր). *Honoris causa* (պատվի համար). *Tabula rasa* (մաքուր տախտակ). *Persona grata* (հաճելի անձնավորություն). *O tempora, o mores* (ո՛վ ժամանակներ, ո՛վ բարքեր) և այլն⁹:

Երբեմն անհնար է ԴՄ-ների բառացի թարգմանությունը, քանի որ դրանք պայմանավորված են տվյալ ժողովրդի կենցաղավարությամբ, նախասիրություններով, կրոնական պատկանելությամբ, ազգային յուրահատկություններով, օրինակ՝ *вешать (повесить) /себе/ камень на шею* – անցավ գլուխը ցավի տակ դնել, գլխին դարդ ու բալա անել, իր համար բեռ դարձնել – չարչարանքի, մտահոգության առարկա դարձնել. *тянуть (разводить и այլն) канитель* – ականջի միսն ուտել, ականջը տանել, ականջը ցավեցնել, գլուխը տանել, զահլան տանել, ծնոտը կախ գցել, երկար չվան անել – ձանձրացնել. *изрубить (рубить) в капусту* – սրի տալ, սրի քաշել, թրատել, կտոր-կտոր անել և այլն:

Դարձվածային փոխառությունները բնորոշ են բոլոր լեզուներին, որոնց կիրառությունը թույլատրելի է: Ժամանակի ընթացքում ստեղծվում է դրանց համարժեքը, և դրանք վերածվում են օտարաբանության¹⁰:

Այսպիսով՝ դարձվածային փոխառություններն ու օտարաբանությունները բառապաշարի ոչ գործուն շերտի միավորներ են: Առաջինները չունեն հայերեն համարժեքը և հարստացնում են լեզվի բառապաշարը, իսկ երկրորդները, ունենալով հայերեն տարբերակը, գործածվում են միայն ոճական նկատառումներով:

⁹ Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 349:

¹⁰ Եզեկյան Լ., Ոճագիտություն, Ե., 2003, էջ 152:

**ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ И ВАРВАРИЗМЫ В СОВРЕМЕННОМ
АРМЯНСКОМ ЯЗЫКЕ****МКРТУМЯН А. А.****Резюме**

Фразеологические заимствования и варваризмы являются единицами функциональных стилей языка. Фразеологические варваризмы – это лексические единицы, вошедшие в армянскую лексику из других языков, но имеющие армянские эквиваленты. Их употребление нежелательно и может быть продиктовано лишь стилистическими задачами.

Фразеологические заимствования – это иноязычные лексические единицы, не имеющие эквивалентов в армянском языке. В отличие от варваризмов они служат источником обогащения фразеологии армянского языка.

**PHRASEOLOGICAL LOANWORDS AND BARBARISMS IN MODERN ARMENIAN
LANGUAGE****A. MKRTUMYAN****Abstract**

Phraseological barbarisms and loanwords are the units of functional style of the language. Phraseological barbarisms are lexical units which have been shifted into the word-stock of the Armenian language from foreign languages. They have their equivalents, too. Their usage is not desirable and is used only for practical cases.

Phraseological loanwords are foreign lexical units which have their Armenian equivalents.

Unlike the barbarisms phraseological units are the source of enriching the phraseology of the Armenian language.